

ԳՐԱԿԱՆ

ԽՈՐԻՆ ՅԱՐԳԱՆՔ ԳՐԱԲԱՐԻՆ ՀԱՆԳԵՊ

«Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս
Հանճարոյ...»

Մրանք են այն առաջին բառերը, որ գրուել են Հայոց
լեզուով, մեարդպատառ Հայերէնով: Մատենադարանի առջև
Մեարդ Մաշտոցը կարծես հենց այս յորդորն է կարգում
ծնրադիր պատանուն:

Այս խոսքն առնուած է Աստուածաշնչից, այն առաջին
գրքից, որ թարգմանուել է Հայերէն, Ծրդ դարում:

Այդ ժամանակից ի վեր մինչև 19րդ դարը գրաբարը
մեր գրական լեզուն է եղել: Գրաբարը բառն էլ նշանակում
է գրի լեզու: Այդ ընթացքում, աւելի քան 1400 տարի, անթիւ
անհամար գրքեր են գրուել ու թարգմանուել գրաբար
Դրանցից շատեր անհետ կորել են մեր ժողովրդի գլխով ան-
ցած րազում աղէտների ժամանակ, բայց շատերն էլ անցնե-
լով հրի ու սրի միջով, հասել են մինչև մեր օրերը և որպէս
ազգային մեծագին Հարստութիւն աչքի լույսի պէս պահուած-
պահպանուած են Մեարդ Մաշտոցի անունը կրող Մատենա-
դարանում:

Լա՛ւ, գրաբարը տիրապետող գրական լեզուն եղել է
մինչև 19րդ դարը: Իսկ ի՛նչ եղաւ յետոյ, ի՛նչ կատարուեց
դարերով մշակուած, ճոխացած այդ լեզուի հետ: Դուք գիտէ՞ք
ինչ գորաւոր երեւոյթ է ժամանակը, անորոք ու անգիջում:
Ամէն ինչ ենթարկուած է ժամանակի անխուսափելի ազդե-
ցութեանը, լեզուն՝ նոյնպէս: Ժամանակի ընթացքում, խզում
է յառաջանում գրական լեզուի և խոսակցական կենդանի
լեզուի միջև: Խզումը դառնում է ճեղքուածք, ճեղքուածքը՝
վիճ: Եւ մէկ էլ յայտնի է դառնում, որ գրական լեզուն մնա-
ցեր է ուսեալ մարդկանց սեփականութիւնը, իսկ ժողովուրդը
խօսում է ուրիշ լեզուով: Այդպէս է եղել դարերի խորքից
եկող ժողովրդների հին լեզուների հետ:

Գրաբարի և խոսակցական լեզուի տարբերութիւններն
աստիճանաբար խորանալով հանգեցրին այն իրողութեանը,
որ 19րդ դարից ի վեր սկսուեց կիրառութեան մէջ մտնել
միջին Հայերէնը, որով ևս տեղուել է գեղարուեստական,
գիտական ու պատմական մեծահարուստ գրականութիւն
Ներսէս Շնորհալի, Ֆրիկ, Վարդան Այգեկցի, Մխիթար
Հերացի և ուրիշների:

19րդ դարի առաջին կէսից ծայր առաւ գրապայթարը
գրաբարի կողմնակիցների և աշխարհաբարի կողմնակից-
ների միջև: Եւ այնքան էլ մեծ էին ու անհրժեքի գրաբարի
արժանիքները՝ կուռ քերականութիւն, ամենաբարդ մտքերն
արայալտելու նկունքութիւն, ճոխ բառապաշար, — յաղթա-
նակը մնաց անհամեմատ թերի ու անմշակ աշխարհաբարին,

որովհետեւ ժողովուրդն այդ լեզուով էր խօսում: Ի՛նչ օգուտ
ճոխ ու գեղեցիկ լեզուով գրելուց, եթէ դա անմատչելի է
ժողովրդին: Յաղթանակը մնաց այն դիրքորոշմանը, որի
պաշտպաններն էին Խաչատուր Աբովեանը, Միքայէլ Նա-
րանդեանը, արեւմտահայ իրականութեան մէջ՝ Արսէն
Այսեանը և ուրիշներ:

Իսկ ի՛նչ եղաւ գրաբարը:

Գրաբարը մեռաւ, իր ուժն ու զօրութիւնը տալով
աշխարհաբարին: Կայ բիրյիական խորունկ մի իմաստութիւն
եթէ ցորենի հատիկը հողի մէջ չի մեռնում՝ կորչում է
անհետ, իսկ երբ մեռնում է՝ հողի երես է ելնում մի նոր
ոսկեհասկ՝ բազում հատիկներով:

Այսպէս է մեռել գրաբարը, այդպէս են մեռել լատինե-
րէնը, հին յունարէնը և ուրիշ քանչեւ խորէն նախալեզուներ:
Ճիշդն ասած, ինչքան էլ մեռած, այդ լեզուները մինչև
օրս էլ անգնահատելի ծառայութիւն են մատուցում ժա-
մանակակից կենդանի լեզուներին: Դուրս է գալիս, որ զրանք
այնքան էլ մեռած չեն, քացառապէս մասնագէտների
սեփականութիւնը չեն: Նրանք ապրում են ժամանակակից
լեզուների մէջ: Ինչքան ղեղատոմսեր են գրում՝ բոլորն էլ
լատիներէն: Բուսաբանութեան ու կենդանաբանութեան մէջ
ուր բոլոր անուանումներն են լատիներէն: Շատ և շատ գի-
տութիւնների մեծածախ տեղմիններ ծագում են հին յունա-
րէնից: Եւ այդ ընթացքը շարունակուած է այսօր էլ:

Գրաբարն էլ ժամանակակից Հայերէնի պահեստն է:
Մէկ էլ տեսար գրաբարից այնպիսի բառեր ու դարձուածք-
ներ են առած ու մտած ժամանակակից լեզուի մէջ, որ ոչ
ոք չէր սպասի: Շատ բան է տուել գրաբարն աշխարհաբարին,
տալիս է և կտայ ապագայում ևս: Ահա ինչու գրաբարն ար-
ժանի է խորագոյն յարգանքի ոչ միայն իրրեւ պատմական
երեւոյթ, իրրեւ մեր ազգային հանճարի բարձրագոյն ար-
տայալտութիւն, իրրեւ մեր քաղաքական և քաղաքացիական
պատմութեան արտացոլում, իրրեւ Հայ գեղարուեստական
մտքի շտեմարան՝ այս ամէնն իրենց հերթին: Գրաբարն ար-
ժանի է խորին յարգանքի և որպէս լեզուական ծով հարս-
տութիւն, որ Հիմա էլ պէտք է ժամանակակից Հայերէնին:

Ո՛չ Հայ հին ճարտարապետութիւնը, ոչ էլ հին Հայե-
րէնը իրենց դարն ապրած վաստակաւորներ չեն, որոնք ար-
ժանի են Հիացմունքի իրենց պատկառելի տարիքի և հնում
մատուցած ծառայութիւնների համար միայն: Եւ մէկը եւ
միւրը մեր ոչ միայն ազգային Հարստութիւնն են, այլև
այսօրուայ կեանքի ուղեկիցները:

ԼԵՈՒՆ ՀԱՍՎԵՐԴԵԱՆ